

հասաստութեան տպարանին, տուեալ ի Շա-
ղոյ-թիւրի յինն զեկա. 1634 ամին,
ի քսաներորդի երկրորդի ամի թաղաւորու-
թեանն. կը դրուին ապա հայ, իսալ և լատին
վիպութիւնք որպէս յառաջին տպագրին Հռոմ-
մայ : ի վերջ գրոյն՝ յէջ 275, excoidebat
Antonino Vitray, 1633, և որ ծանօթ
արեւելագէտ տպագիր է : Իսկ ի միւս էջն՝
ոսանաւոր գրուած մի հայ, յայտարար պա-

րունակութեանց մատենին. « Գրոց ցանդըն
է պարզաբանեալ, — կարգին թրխտոցն է
շարագրերալ » և այլն :

* * *

Փարիսէն անցնինք ի Նոր Զուգա : Առ
այս հեռաւորութիւն կը բռնադատուինք ի
ժամանակագրական ցուցակէ տպագրութեանց :
(Շարայարհի)

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵԼՍ

(Շարունակութիւմ — Տես յէջ 498)

ԼԵ.

Վայրէջք իզդիրի կողմէն. — Եօրն խասնարան հրարուղիք. — իզդիրի ջրանցք և անոնց
անպատեհոտրեանները. — Բոյնք արագի. — Գարագալա կայարան :



Ս Գ Ի Ի Ր Ի դաշտին միջէն ճանա-
պարհորդելնուս նպատակը,
այցելութիւն մը ընել է կող-
բայ հոչակաւոր աղահանքին,
և Հայոց պատմութեան մէջ
նշանաւոր քանի մը քաղաքաց աւե-
րակներուն, որ այդ աղահանքին մե-
տերը կը գտնուին, և են՝ Գարագա-
լա, Երուանդաշատ և Երուանդա-
կերտ, ապա Արմաւիր. ուստի պիտի
դառնանք յԵրեւան :

Ղորղանի գեղեցիկ բանակետը
թողէն ետքը, արահետ ճամբայ մը
կը բռնենք՝ գրեթէ արօտատեղեաց
մէջ բացուած. յետոյ էջքը կը գը-
ժուարանայ, և խոտաւէտ գաշտերու
տեղ՝ ապալիր և սահուն ժայռեր ընդ
առաջ կ'եննեն մեզ :

Այս՝ դեռ բարձր գիրքէն, վերջին
ակնարկ մը կը ձգեմ այն ճամբուն
վրայ՝ զոր պիտի անցնինք, ու կը

տեսնեմ ովափսներով ցանուած անա-
պատ մը : Հառաչելով առաջին քայլը
կ'անուամ՝ հրաբոխային հսկայական
սանդղոց՝ որ ուղղակի պիտի իջեցը-
նեն զմեզ ի հնոցն դաշտին :

Մերթ հետիտն և մերթ ձիւալարե-
լով՝ կ'անցնինք եօթն հրաբխի բու-
րածէ խառնարաններէ, որոց խորը
լեցուած է. որոնք կը կազմեն Այրա-
բատայ այս գիրքին նեցուկք, բուն
կրկիսից ձևն առնլով, և իրենց կարգ-
կարգի վրայ փլածոյիւք աստիճաններ
ձևացընելով : Կը մացուի անոնց մէջ
ու կ'ըլլըցուի իրարու հետ հարդը-
գակցութիւն ունեցող բաւզաձև անց-
քերէ : Դեղնած խոտերու խրճուց մէջ
կը փայլին հիւսնալի եզնուռոյց (bu-
preste) միջառք զմրխտագոյն աստե-
ղափայլ վերնաթեպք : Այս պատեհա-
թեւից քով կը տեսնուին մեծամեծ
թռչող մարախներ և ուրիշ շատ մի-

չառք, որոցմէ ճոխ հաւաքումն մի կ'ընենք։

Այրարատայ արևմտեան հրաբլիզ-խային մեծ խառնարանաց փլածոյից առջեւէն կ'անցնինք հիմայ։ Այն է Պարսկաստան և թուրքիա երթալու ճամբան։ Չախակողմեան յարգարուն ճամբայ մը կը տանի ի Պայազիտ։

Ժամերով պսպէս յառաջ կ'երթըցուի, աւելի յաճախ հետիոտն քան երկվարան, և գրեթէ առանց անգրադառնալու, արեգական կրակոտ ճառագայթից տակ, զմեզ պաշտպանելու հովանւոյ մը չհանդիպելով կամ բուսականութեան հետոյ. այնչափ որ ջերմութեան սաստկութենէն մեր ձեռաց և երեսին մորթերը կը թափին կ'ելնեն։

Երեք ժամէն ետքը հազիւ կրնանք անցնիլ այդ նուիրական լեռին վերջին աստիճանն, և առաջին գիւղը կ'ողջունենք։ Բայց հազիւ թէ դաշտավայրը կը հասնինք, ուրիշ գծուարութիւն և արգելք մեղի կը սպասէ։ Շատ օրեր ի ջրոյ բոլորովին զիրկ մնայնէս ետքը, հոս ամէն կողմանէ նոյն տարրէն կը պաշարուինք. վասն զի իգգիբի դաշտը չորս կողմէն ամրացած է լայն և խորունկ ջրանցքներով, որ կը ծաւալին, իրարու հետ կը խառնուին, և պարսպի պէս ճամբան կը խափանեն կը գոցեն։

Մինչ կողակք օգնութեամբ տեղացի քրդաց կը չափեն ջրանցքին խորութիւնը, որոյ առջեւ կանգ առած կեցած ենք, մեր ձիերը ջրոյն տեսլեամբ խենթեցած՝ յանկարծ կը մխուրն մէջը. իմն փոխանակ ջրանցքէն անդին անցնելու, և առանց անսալու իմ ջանիցս, անոր ընթացքին հակառակ կ'ուզէ վեր ելնիլ։ Կ'ընկղմի ջրոյն մէջ, կը սկսի լողալ, մինչ ես ասհարեկ օգնութիւն կը խնդրեմ, կարծելով թէ պիտի խեղդուիմ։ Նոյն միջոցին քուրդ մը տեսնելով որ հա-

ւասարակշուածիւնս կորուսեր եմ, ձրգեց ինքզինքը ջրոյն մէջ, ձիոյս սանցէն բռնեց ու հանեց զմեզ ի ցամաք, Համառօտ բեմ, ամենադժուարին և մեծապէս վտանգալից է այս մուտք։

Ղահճօք, գեղեցիկ բրնձենեօք, բամբակի ու եգիպտացորենի արտերով ծածկուած է դաշտին ընդարձակութիւնը։ Իսկ մենք հազիւ թէ կէսօրուընէ ետքը ժամը երեքին կը հասնինք յիգգիբ, երեսունըվեց աստիճանի բարեխառնութեամբ կատարելով մեր ամենէն աւելի աշխատալի և պարտասեցուցիչ յօթեկանէ օթեկան անցից մէկը։

Ղորդանէ քուրդ պատգամաւոր մը զրկած էինք՝ պրիստաւին ծանուցանելով կանխաւ մեր հասնիլը որ սիրալիբ, ինչպէս ամէն ուուս պաշտօնակալք, որոց հետ վերաբերութիւն ունեցանք, պատրաստել տուեր էր մեզի համար տան մը գետնայարկը. ուր հազիւ թէ տեղաւորուած էինք, տեսանք բարի մարդուն մէկը, որ լեմնատի և դարեջրոյ շիշերով ծանրաբեռնած կը հասնէր առ մեզ. Հարկ չէ ըսել թէ որպիսի՝ ընդունելութիւն ըրինք. շատ օրեր ազի ջուր խմելու բռնադատուած ատեննիս, առատ գարեջուր գտնելը՝ ուրախութենէ խելք կորսունցնելու չափ բան չէ՛ արդեօք։

12 յուլիս. — Բոլորովին մերկ տըղայք ճամբաներուն մէջ կը խաղան, ու հողուն մէջ տապըլտըկելով՝ կազդուրել ու կարծրացնել կ'ուզեն մարմիննին, իրենց փափուկ մորթը պահպանելու համար արեգական կիզիչ ճառագայթներէն ու մեծկաց խայթուածքէն։ Ջրանցից մէջ լող տալով կը լուացուին գոմէշներու հետ խառն, որոց սեռ և գիշին ցուկը, եղջերք և փայլուն աչքերը միայն կը տեսնուին ջրէն դուրս ցցուած։

Խեղճ է իգգիբի վաճառանոցը. բայց կը տեսնուին լեզներէն եկած բազմաթիւ քուրդք, իրենց հօտերուն

արդիւնքը վաճառելու, և կարեւորն հայթհայթելու: Հետեւինն խառն կը տեսնուին Ռուսիոյ, Պարսկաստանի ու թուրքիոյ մէջ ցրուած ամենայն ցեղից ներկայացուցիչք: Սէյլանլիք, Չափա, Ճէլալիք, Ռադքի. յորոց հետաքննական խմբի մը լուսապրութիւնն և չափը կը ցաւ առնուլ պարոն Շանտր:

Երեկոյեան դէմ ուռւ պրիստաւին տունը գնացիւք՝ ուր հրաւիրուած էինք: Քանի մը գաւաթ ընտիր թէյ առնելէն ետքը, խմորեղէններով և քաղցրաճաշակ անուշներով, ասպնջականնիս ուզեց ցուցնել մեզ թէ եւրաժիշտ ալ է, և զարմացոյց: Առանց աղաչել տալու՝ իր ջութակովը ու զարմանալի հանճարով մեզի սիրելի գաղղիական երգերը նուագեց: Իմանալով թէ տան մէջ կը գտնուի երգիտնիկ (harmonium) մը, մէկէն կը նստիմ ու կը տիրապետեմ անոր: Ժամանակը շուտով կ'անցնի այն գիշեր, և երաժշտութիւնը՝ որուն կը հետեի նաև պարախաղը, մեծ ազդեցութիւն կ'ընէ վրաս:

13 յուլիս. — Իգգիւրէն մեկնելու ատեննիս, զարմանքով կը տեսնենք որ կարաւանին հետ կը խառնուի հայ մը, չափարաց սպայ, որ կ'ուզէ ընկերանալ մեզ մինչ ի կողմ, և առաջնորդել մեզ, թէպէտեւ ամենեին պէտք չունիւք իրեն, և ոչ ալ հետն ունեցած երկու ձիաւորներով ածեցընել մեր ուղեկցաց թիւը:

Առաւօտեան ժամը վեցին ամէնք կը չարժին ճամբայ ենելու: Նոյն պահուն խումբ խումբ գոմէշից և կովուց ախոռներէն գուրս կ'եղնեն և արածելու կ'երթան փոքրիկ հովուահաց առաջնորդութեամբ, և մեր տեսլենէն կը զայրագնին կատղելով:

Ճամբաներնուս վրայ են Ալի-Գամարլու, Եարճի, Չալուչի և Գուլուք գիւղորէք, շրջապատեալք ի հովանաստուեր կաղամախեաց և ուռնեաց:

Ի պտղատու ծառոց և ի գեղեցիկ թրթնեաց, որոց ամենուն վրայ դադարած են բազմաթիւ արագիւք:

Ամենառատ են որսականքն՝ յսպոպ, քարադր (pluvier), ճայ, ջրակոցար, արօս, արտոյտ, կաքաւ, և այլն. որոսյ համար գերազանց երկիր մ'է: Տ. զօրավարը ամենագեղեցիկ արօս մը զարկաւ գետին ձգեց:

Գիթի գիւղին մէջ ծանրաչափը 1000 մետր բարձրութեան կը ցուցնէր, իսկ ջերմաչափը երեսուելեց աստիճան, առաւօտեան ժամը տասնըմէկին՝ պարտիզի մը մէջ ծառերու հովանոյն տակ, և փողոցը կամ ճամբուն վրայ՝ քառասունըսրս աստիճան:

Քանի մը կաղամախեաց հովանոյն տակ կ'ուզենք քիչ մը հանգչելով՝ շունչ առնուլ և ազատիլ արեգական ճառագայթից սաստկութենէն. ծարանիս ալ մարելու համար, վայրի խնձորենուց մը վրայ կը թափինք, մերկացընելով վրայի պտուղներէն:

Նորէն ձի հեծնելով, կարաւանը Երասխայ կը մտնեայ, որոյ ափանց վրայ երամակք ուղտուց՝ բեռնառուրուած նաւթիւ՝ մաղձոտ տխրութեամբ կ'արածին երեւակայեալ խոտոյ մը վրայ: Իգգիւրէն սկսեալ՝ նոր շինուած ճամբովը կտրեցիւք մեր դրնացքը, և որ պիտի տանի մինչ ի սահմանադուլան թուրքաց, թէպէտե թղթատարի կայանք դեռ շինուած չեն:

Վերջապէս Գարազալի չափարաց կայանը կը հասնինք, և թէպէտ հոն կենալու միայն շունէիւք, բայց կ'որոշենք գիշերը անցընել այդ գրեթէ անբնակելի կայանին մէջ՝ Ո՛հ, որչափ նախամեծար է վրանի տակ բռնակիլը, քան այդ որդնալից հիւղերուն մէջ:

ԼԶ.

Ստարածարք Գարսագայէի, աւերակք, գե-
րեզմանք. — Հանդիպումն կարաւանաց. —
Սուրմալու քաղաք. — Ժամանումն ի կողմ :

Հանդէպ չափարաց տնակին կը
տարածուի ժայռուտ ու լաւայի միա-
կերպ ընթացք ունեցող քարուտ սա-
րահարթ մը, որ Չինչուտտ չայի գե-
տաբերանէն կը ձգուի մինչև Գարա-
գալէէն ալ անդին :

Գրեթէ կղզեկի մը, կամ՝ մանա-
ւանդ կղզիացեալ հրուանդանի մը վը-
րայ, մէկ կողմը ունելով գերասխ, և
ի միւսմէն՝ հիմայ ցամբած հեղեղատ
մը, կը տեսնուին նկարագեղ ու ժա-
մանակէն սեւցած՝ հին Գարագալէի
(Սեւաբերդ) աւերակք, զոր ոմանք
վրիպակաւ կը նոյնացընեն Տիգրա-
նակերտի հետ, որ Հայաստանի գըլ-
խաւոր մայրաքաղաքներէն մէկն էր :

Սեւացեալ լաւայից կոյտին մէջ, ս-
րոնցմով կառուցուած էր քաղաքն,
կը բարձրանայ կանգուն՝ բերդա-
վայրն, Հիանալի է տեսիլ այս գոռոզ
աւերակին, որոյ որմունք և աշտա-
րակք՝ կարծես թէ հիմայ ալ կ'ար-
համարհեն զժամանակ՝ իրենց լաւա-
ներովը և կարմրագոյն պորփիւր քա-
րամբք, և այս մեծ շէնքին կառուց-
ման համար ի գործ գրուած աշխա-
տութեամբ և խնամտ ջանիւք, Բեր-
դէն անդին կառուցուած էր քաղա-
քին վերին մասը, ընդարձակ գերեզ-
մանատամբ, յորում՝ խառն թաղուած
են Պարսիկք և Հայք. Երասխայ ա-
փանց վրայ ալ ստորին քաղաքը, և
կամուրջ մը գետոյն վրայ :

Բնական դիրքովն ալ ամենալաւ
ամրացած էր Գարագալէ. երկու կող-
մանէ պաշտպանուած ըլլալով ամենա-
խոր փոսերով. երրորդն ալ Երասխ
հետով. մնացած չորրորդն միայն քիչ

մը տկար կրնար սեպուիլ, նեղ կիրճ
մը, ուր պատեր ու աշտարակներ կա-
ռուցեր էին ամրացընելու համար,
Բնական բերդիս տեսիլը այնչափ ա-
ւելի հետաքրնական է որ սեաւ լա-
ւան՝ երկայն և հորիզոնական սենեակ-
ներուն մէջ, բազալդեան սիւներու
պէս գործածուած է, բաժանմանց
համար : — Ընդարձակ գերզմանա-
տան յիշատակարանաց մէջ նշանաւոր
բազմանկիւնի մահարձան մը աղիւ-
սեայ ու պարսկային ոճով. տեսակ մը
գերեզմանական աշտարակ՝ որ ի Գա-
րագալիլիան տեսածնիս կը յիշեցընէ :

Բերդին դիմաց, համանման բարձ-
րութեան վրայ կը տեսնուի քարայր
մը, ուր կ'ըսեն թէ առննով բարե-
պաշտ ճգնաւոր մը կը բնակէր. և կը
կոչին « Զարիւր քան խաչի անա-
պատ », բարձրութիւն խաչեր փորա-
գրուած ըլլալուն՝ քարայրին դրանը
չորս կողմն եզող քարերուն վրայ,
Հիմայ ալ ի Հայոց շատ մեծարուած
տեղ մ'է, ուր կը յաճախեն յուխտ,
Քիչ մը անդին, ուրիշ բարձրաւան-
դակի մը վրայ՝ ժողովրդական զրոյց
կը ցուցընէ այն տեղը ուր Յովբ նըս-
տեալ յաղբիւսի, կը խօսէր իրեն այ-
ցելութեան եկող բարեկամ՝ թապա-
ւորաց հետ :

Գեղեցիկ արեւմտից ծիրանեփայլ
լուսով, այս աւերակաց տեսիլը՝ այն
լուսութեան մէջ ուր քանի մը արտու-
տից երգէն ուրիշ ձայն չի լուսիւր,
անբացատրելի մեղամաղձութեամբ կը
լեցընէ մարդուս սիրտը, Գոռոզ բեր-
դին աւերակաց վրայ նստած, ակ-
նարկ մը կը ձգեմ՝ դաշտին ընդար-
ձակութեան վրայ, զոր կը լուսաւորեն
արեգական վերջին ճառագայթք,
կ'անհետանայ նա մէկէն Ս'ասեաց
բարձր գագաթին ետև, որոյ ձիւները
յաջորդաբար կ'առնուն պարմանա-
հրաշ գոյներ՝ կարմիր, մանուշակ և
կանաչ, մինչև որ կատարեալ գիշերը
յանկարծ վրայ կը հասնի. և ամօթ-

խածն լուսնեակ իր երեսէն վար կ'առնու զքօղն թեթեւ, որով կը ծածկէր մեզնէ իր խորհրդալից և պարզունակ գեղը:

Իր պայծառութեամբ դարձեալ յառաջներ ընդ գծնդակ ճանապարհն որ կը սպասէ մեզ, անձրեւի հեղեղներէ ձեացած խոռոչներէ անցնելով, յորոց ի մուտս առատ ջրոյ ակունք կը նկատեմ, և որոյ տեսիլ յանչափս կը զուարթացընէ զիս: Ափսոս որ աղային ըլլալով, անկարելի է մեզ առնով ոգտուիլ, տասներհինգ աստիճանի բարեխառնութիւն ունի: Այս ճաթըռտուածքներուն մէջ բազմաթիւ քարայրք կան, ուր տեղայի ֆուրքք կը բնակին ի ձմերան:

Կը հանդիպինք հոս, Էրասխայ ճամբուն վրայ՝ բազմութիւն կարաւանաց իչոց և եզանց, որ կողքէն աղ բառնալով կը փոխադրեն յիգդիր և ի նոր Պայազիս: Կարաւանապետն են Ռադքի և Ծ'ելպի ֆուրքքորոց հետ խառնուած կը գտնենք Սարդար—բուլպի մեր ծանօթներէն քանի մը անձինք, որ կու գան բարեկ զմեզ շէնքով շնորհքով ու վրանիս տեղեկութիւն հարցընել: Վասն զի կը վախեն եղբր թէ Արկուռիէն ասդին ճամբաներն խիտ գծուարագնացք ըլլան ինձի համար, և մեծ գոհութիւն կը յայտնեն իմանալով թէ ամենուրեք յաջողած ենք: Զգեստնին և հանդերձք բոլորովին տարբեր են քան ինչ որ կը գործածեն ի տան. այլ ճամբորդի ձևով են, որ է բսել՝ իրենց ամենէն ազնիւ համարուած զգեստներովը, և ընտրելագոյն կազմածիւ զինուց: Այս վերջիններս են՝ բաց ի քանչալէ մը, մեծ սուր մը և փոքրիկ փայտեայ վահան՝ կաշիով ծածկուած ու գամերով հաստատուած, որ 0 մ. 30 տրամագծէն աւելի չունի, և որոյ հարուածներէն պաշտպանելու կը ծառայէ: Խնդիրքիս պիջանելով՝ իրենցմէ երկու հոգի

յանձնառու կ'ըլլան կուռիլ, սրոյ խաղին հետ՝ գաւազանինը գործածելով, որ ֆրդին ձեռք ահաւորագոյն զէնքերէն է: Մէկէն իրարու վրայ կ'իյնան. հարուածները կարկտի պէս իրարու վրայ կը թափին երկու կողմանէ, ու վահանիկովը անոնցմէ ինքզինքնին պաշտպանելով: Զարմանքով ներկայ կ'ըլլանք այս յարձակման, յորում հիացման արժանաւոր է կուռողաց ոյժն, ճարտարութիւն և ճապով արագաշարժութիւն:

Զափարաց բնակութիւնն դառնալով ուր կ'եթաղքէինք իրաւամբք ձեռք ձգուած ճաշ մը գտնել, որոյ գաղափարն իսկ զմեզ կը զուարթացընէր, մանաւանդ որ զօրապետին որսացած արօսն անոր մէջ պիտի գտնուէր, ցաւօք սրտի գտանք զամէնք, նոյն իսկ մեր խոհարարն, խորունկ քնոյ մէջ ընկզմած: Հարկ եղաւ քրպաձով արթնցընել զՔէորգ, որ անհոյութեամբ սկսաւ պատրաստել մեր ճաշը: Բայց այսպիսի դէպքերու մէջ յաճախակի հանդիպեցաւ և մեզ, որ եղած ձախորդութիւնը և կարգէ դուրս յողնածութիւննիս՝ ուտելու ախորժակիս ալ տարաւ. ուքուն եղանք առանց բսն մը առնելու, յիսուն հազարամետր ձիւ վրայ ճամբորդութիւն ընելէն ետքը: Ահաւսիկ ի'նչպէս սնցուցինք այն գիշերը:

Սակայն գիշերը՝ դժբաղդաբար փոխանակ հանգստեամբ կազդուրելու և զօրացընելու զիս, աներեւոյթ մթեղաց անթիւ խումբ՝ օրը լմնցաւ չի լմնցաւ՝ սկսան իրենց գործին: Իսկ Գէորգ՝ օրուան մէջ արդէն քունն առած ըլլալուն, դուրսը պարզ երկնից գեղեցկութիւնը և հաճոյքն վայելելով՝ սրնգովը բոլորովին անձանօթ մեղեդիներ կը լսեցընէր:

14 յուլիս. — Կանուխ արշալուսոյն կ'իջնեմ նկատել արեւուն ծաղման տեսարանը, որ այնչափ գեղեցիկ է յարեւելս: Ոչ նուազ հաճոյական է

և տեսիլը. աւերակք զարմանագործ
 Գարագալէի կ'ամբառնան իրենց յան-
 գուգն ստուերական ծրագիրը. մինչ
 անդին ի խորս տեսարանին՝ հսկայա-
 կան ձոյն Մ'ուսեաց՝ կամաց կամաց կը
 փարատէ ու կը պարզուի վարդազոյն
 գոլորշեաց փառաւորութենէն. թիթե-
 են օդք. երկինք դեռ ևս տփզոյն կա-
 պոյտ, բայց այնչափ ջինջ և մաքուր,
 որ կը փութամ մէկէն ճամբայ ելնել,
 որպէս զի կարենամ ժամ մը աւելի
 վայելել այդ քաղցր զովութիւնը, որ
 աւանդ, խիստ սակաւատե է:

Ժամը հինգին՝ առանց սրտի ցաւ
 զգալու, հրաժեշտի ողջոյնս կուտամ
 Գարագալէի չափարաց և իրենց խեղճ
 ու անարգ որջին, որ ամենէն աւելի
 տխուր յիշատակներէս մէկն է, ու կա-
 բուանը կը սկսի յառաջել հիւսի-
 սային արեւմտեան ուղղութեամբ. դեռ
 չաւարտած քարայտակ ուղիէ մը,
 որ կը կարէ քարկարկառ բլուր մը:
 Երասխայ ափանց վրայ՝ ի ծայր
 ընդարձակածաւալ դաշտին ուր կը

բարձրանայ Գարագալէ, կը տեսնուի
 գեղեցկապէս՝ աստիճանեալ և բալորշի՝
 հին քաղաքն Սուրմալու. Բոլոր դաշաը
 լի է ոչ այնչափ հետաքննական աւերակ-
 ներով, բայց ցուցընելով միանգամայն
 լի է ժամանակաւ բազմամարդ բնա-
 կութեան տեղ եղած պիտի բլայ:

Հազար հարիւր տասն մետր բարձ-
 բանալէն յետոյ, կը սկսի ամենարագ
 վայրէջքն ի կողք. կարմիր ու կապ-
 տագոյն կրախառն կաւային՝ կարգէ
 գուրս սահուն հողոյ մը վրայ որ կ'եր-
 թայ կը խառնուի Չինչալաշայի աղի
 ու տղմուտ ջրոցը հետ: Բայց վեր-
 ջապէս յարգարուն ճամբայ մը կ'ա-
 ռաջնորդէ կը տանի զմեզ մինչ ի կողք,
 և յարգանք կ'ողջունեմ մեծարանաց
 արժանի աղի լեռը: Բայց հոն ալ պի-
 տի չկարենանք բնակութեան վրաննիտ
 կանգնել, զի հանքին վերատեսուչը կը
 պնդէ որ իւր տունն իլիննք: Մ'աբուր
 և բանուկ օդ ունեցող սենեակ մը կը
 ցուցընէ, ուր կը ձգուին ու պատրաս-
 տուին մեր անկողինք:

(Շարայարեի)

Հ Ա Ն Դ Ե Ս Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն Խ Ա Ղ Ա Մ Ո Լ

(Տես յ'էջ 511)

ՑԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԻՒ

Հրակնդ և Սեպոռնի

Հրակնդ. — Ա՛խ... (զողորդալով
 կ'իյնայ արոտի մը վրայ հանգչեցոս)...
 Ինչ էր լսածս... Ինչ տեսածս... երանդ
 է... աչքերս բան չեն տեսներ... ծնկուր-
 ներս զիս վեր չեն բռներ... (կը մնայ կես
 մարած քրտորեան մէջ):

Սեպոռնի. — Սմբատ... սիրելի Սըմ-
 բատ... անմեղ Սմբատ (կահանաճայն կու
 լայ՝ սեղանի մը վրայ խոնարհած):

(Քանի մի մակերկրորդ շտորիսն ես լաց)
 Հրակնդ. — (Ոտք էլլելով) Սմբատս
 քո՞ղ կը դատապարտուի... ս'է, չէ՛. ան-
 հնարին բան է... մեծ գաւ մը ծածկուած
 է... ո՛, Ինչպէս, Ինչպէս իմանամ...
 Աստուած արդար, օգնէ ինձի... Սյս ե-
 րիտասարդը չեմ՝ ճանչնար ս'լ է, բայց քիչ
 առաջ ինչն՝ ըստ որ Սմբատի բարեկամն
 եմ՝ ուրախացաւ՝ երբ յայտնեցի որ Հրակնդ
 մահուան ծանուցագիրն ստաւ է հիմա ալ կու
 լայ անմխիթար Սմբատի բռնութեան վրայ,
 Սմբատի անմեղութիւնը կ'երպուրնար. ու-
 թեմն Սմբատի մտերիմ և ճշմարիտ բարե-